Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-05-2020 թ. որոշմամբ
««ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝	
1.1 Լրիվ անվանումը	«ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Չարենցի փող., 31 բն.4
1.3 Պետական գրանցման համարը	264.160.05729
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2002-04-02
1.5 ՀՎՀՀ-ն	00072048
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)98119219
	+(374)10540631
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.c-i.am
1.8 Էլեկտրոնային փոստը	amalia@c-i.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝	
Ալեքսանդր Իսկանդարյան	
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝	
4. Կառավարչի անուն, ազգանուն՝	
Ալեքսանդր Իսկանդարյան	
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	12
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0
8. Ֆինանսավորման աղբյուրները՝	

8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Հասարակության և որոշում կայացնողների ներգրավումը ԼՂՀ հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ երկխոսության մեջ	3087999
	ԼՂՀ հասարակական ներգրավվածության կարողությունների բարձրացում	110827041

	Բանավեճի մրցաշար	744457
	ԿԻ գիտաժողով 2018	5355981
	Պրակտիկա Արցախի երիտասարդների համար	1082769
	Հետաքննական և վերլուծական լրագրությունը Արցախում	2954865
	Համապարփակ վիճակագրական տվյալների բազաների ստեղծում	3588032
	Դասընթաց հանրային կապերի ոլորտում	4286460
	Պրակտիկա Երևանում Արցախի դասախոսների համար	5073492
	Գրքեր Արցախի համար	2529304
	Ծրագրերի կառավարման թեմայով սեմինարներ՝ Արցախի քաղհասարակության կազմակերպությունների համար	4490523
	Անցումային փորձի փոխանակում Ռումինիայի և Հայաստանի միջև	18494183
	Տոկոսային եկամուտ ավանդից	1630981
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
	0	0
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Հասարակության և որոշում կայացնողների ներգրավումը ԼՂՀ հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ երկխոսության մեջ	4704791	
Լեռնային Ղարաբաղում հասարակական ներգրավվածության կարողությունների բարձրացում	110115131	
Բանավեճի մրցաշար	605373	
ԿԻ գիտաժողով 2018	5355981	
Պրակտիկա Արցախի երիտասարդների համար	4534527	
Հետաքննական և վերլուծական լրագրությունը Արցախում	4018610	
Համապարփակ վիճակագրական տվյալների բազաների ստեղծում	1030270	
Դասընթաց հանրային կապերի ոլորտում	3001582	

Պրակտիկա Երևանում Արցախի դասախոսների համար	1020420
Գրքեր Արցախի համար	499497
Ծրագրերի կառավարման թեմայով սեմինարներ Արցախի քաղհասարակության կազմակերպությունների համար	1086750
Անցումային փորձի փոխանակում Ռումինիայի և Հայաստանի միջև	18494183
Սիմուլյացիոն խաղ	6130885
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	160924196
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	160598000

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 35 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Կովկասի ինստիտուտ»
հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

AMH AUDIT
HLB WE ARE AN INDEPENDENT MEMBER OF THE GLOBAL ADVISORY AND ACCOUNTING NETWORK

Էյ-Էմ-Էյչ Աուդիտ ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0023,
Արշակունյաց պող. 2,
գրասենյակ 315

Հեռախոս՝ +(374 60) 62 32 51
Բջջային՝ +(374 91) 88 30 10
Կայք՝ www.amhaudit.am
www.hlb.global

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կովկասի ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Վերապահումով կարծիք

Մենք իրականացրել ենք «Կովկասի ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ «Կազմակերպություն») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, բացառությամբ այն ուղղումների ազդեցությունից, եթե կլինեին այդպիսիք, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե մենք կարողանայինք ձեռք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույց *«Վերապահումով կարծիք արտահայտելու հիմքեր»* բաժնի առաջին պարագրաֆում նկարագրվածի վերաբերյալ, և այն հարցի ազդեցության, որը նկարագրված է նույն բաժնի երկրորդ պարագրաֆում, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2019թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Վերապահումով կարծիք արտահայտելու հիմքեր

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 10(բ)-ում, Կազմակերպության 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների գրքեր դասում 9 հազար դրամ (2018թ.՝ 50 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով և արտահաշվեկշռում 5,118 հազար դրամ գումարով (2018թ.՝ 5,118 հազար դրամ) հաշվառվող գրքերի ֆիզիկապես գույքագրումը հնարավոր չէ իրականացնել դրանց վերաբերյալ պատշաճ հաշվապահական գրանցումների բացակայության պատճառով: Ի լրումն, արտահաշվեկշռում հաշվառվող տարիների ընթացքում անհատույց ստացված գրքերը չեն ճանաչվել որպես հիմնական միջոց և չեն չափվել իրական արժեքով՝ համաձայն ՀՀՄՍ 16 *«Հիմնական միջոցներ»* և ՖՀՄՍ 15 *«Հաճույթ գնորդների հետ պայմանագրերից»* ստանդարտների: Այլ աուդիտորական ընթացակարգերի միջոցով հնարավոր չեղավ բավարար աուդիտորական ապացույցներ ձեռք բերել 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նշված հիմնական միջոցների ֆիզիկապես առկա քանակության վերաբերյալ և որոշել նշված անհամապատասխանության ազդեցությունը 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հիմնական միջոցների, ակտիվներին վերաբերող շնորհների հաշվեկշռային արժեքի, տարվա շահույթի և չբաշխված շահույթի վրա:

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 10(գ)-ում, 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում Կազմակերպությունը չի իրականացրել 10,492 հազար դրամ հաշվեկշռային արժեքով (2018թ.՝ 8,547 հազար դրամ) հաշվառվող հիմնական միջոցների գործառնական արդյունավետության վերանայումը, ինչպես պահանջվում է ՀՀՄՍ 16 *«Հիմնական միջոցներ»* ստանդարտով: Նշված անհամապատասխանության ազդեցությունը 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հիմնական միջոցների, ակտիվներին վերաբերող շնորհների հաշվեկշռային արժեքի, տարվա մաշվածության, տարվա շահույթի և չբաշխված շահույթի վրա չի որոշել:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների վարքագծի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՎՄՍԽ Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծին վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀՎՄՍԽ Վարքագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Ղեկավարության և Խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար« որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Կազմակերպությունը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Խորհուրդը պատասխանատու է վերահսկել Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել« որ, առանձին կամ միասին վերցված« ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք ...
ռիսկերին անհրաժեշտ ...

ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, բայց ոչ Կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում՝ ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որոնք կարող են լուրջ կասկածներ հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Կազմակերպության կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք Խորհրդում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած էական հարցերի, այդ թվում աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Արամ Հովհաննիսյան
Գլխավոր տնօրեն և պատասխանատու աուդիտոր

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ
15 մայիսի 2020թ.

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	10	62	237
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	18	18,559	-
Ոչ նյութական ակտիվներ		23	43
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**18,644**	**280**
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11	-	964
Կարճաժամկետ բանկային ավանդ		21,194	-
Տրված կանխավճար		2,138	1,299
Տրված կանխավճարներ շահութահարկի գծով		298	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	35,020	43,728
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**58,650**	**45,991**
Ընդամենը ակտիվներ		**77,294**	**46,271**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Չբաշխված շահույթ		2,311	4,187
Ընդամենը սեփական կապիտալ		**2,311**	**4,187**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	13	85	280
Վարձակալության գծով պարտավորություններ	18	15,003	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**15,088**	**280**
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	14	45,445	39,098
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	10,398	266
Շահութահարկի գծով պարտավորություն		-	1,040
Վարձակալության գծով պարտավորություններ	18	4,052	-
Պահուստներ		-	1,400
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**59,895**	**41,804**
Ընդամենը պարտավորություններ		**74,983**	**42,084**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**77,294**	**46,271**

* Կազմակերպությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը, որի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում՝ սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 5):

հազ. դրամ	Ծնթգ.	2019թ.	2018թ.
Հասույթ		-	8,197
Գործառնական այլ եկամուտներ	6	161,948	104,266
Աշխատակազմի գծով ծախսեր	7	(74,788)	(65,931)
Վարձակալության գծով վճարներ		-	(9,833)
Մաշվածություն և ամորտիզացիա	10	(5,454)	(752)
Գործառնական այլ ծախսեր	8	(79,490)	(31,823)
Ֆինանսական եկամուտ	9	1,631	1,079
Ֆինանսական ծախսեր	9	(866)	-
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**2,981**	**5,203**
Շահութահարկի գծով ծախս		(326)	(1,040)
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		**2,655**	**4,163**

* Կազմակերպությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը, որի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում՝ սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 5):

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2020 թվականի մայիսի 15-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Ալեքսանդր Իսկանդարյան
Տնօրեն

Օֆելյա Ներսեսյան
Գլխավոր հաշվապահ

հազ. դրամ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	24	24
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		
Տարվա շահույթ	4,163	4,163
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	4,163	4,163
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	4,187	4,187
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ. (մինչև վերաներկայացումը)	4,187	4,187
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն՝ ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային ազդեցություն*	(346)	(346)
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ. (վերաներկայացված)	3,841	3,841
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		
Տարվա շահույթ	2,655	2,655
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	2,655	2,655
Չբաշխված շահույթի վերագրում կանոնադրական նպատակներին՝ որպես եկամուտներին վերաբերող շնորհների օգտագործում	(4,185)	(4,185)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	2,311	2,311

* Կազմակերպությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը, որի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում՝ սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 5):

հազ. դրամ	2019թ.	2018թ.
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Ծառայությունների մատուցումից	-	8,197
Շնորհի ստացված դրամական միջոցներ	162,515	109,753
Տրամադրված շնորհներ	(46,251)	-
Պաշարների ձեռք բերում	(1,005)	-
Վճարումներ ծառայությունների դիմաց	(16,718)	(32,078)
Վճարումներ կրթաթոշակների գծով	(2,274)	(3,689)
Վճարումներ աշխատակիցներին	(53,944)	(50,085)
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	(19,641)	(15,737)
Վճարված շահութահարկ	(1,665)	-
Այլ ելքեր	(3,187)	(427)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքեր	**17,830**	**15,934**
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Բանկային ավանդի նվազում	(20,000)	-
Ստացված տոկոսային եկամուտներ	437	227
Ներդրումային գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր	**(19,563)**	**227**
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Վճարած տոկոսներ	(759)	-
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(6,111)	-
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր	**(6,870)**	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**(8,603)**	**16,161**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	**43,728**	26,716
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(105)	851
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ (ծանոթագրություն 12)	**35,020**	**43,728**

* Կազմակերպությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը, որի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում՝ սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 5):

Կազմակերպությունը Վճարումներ ծառայությունների դիմաց հոդվածում ներառել է փոքրարժեք և կարճաժամկետ վարձակալության գծով դրամական միջոցների վճարումները:
Վարձակալության գծով պարտավորությունների հիմնական մասի և տոկոսային մասի դիմաց դրամական միջոցների վճարումները դասակարգվել են որպես ֆինանսավորման գործունեություն:

1 Նախապատմություն

(ա) Կազմակերպությունը և հիմնական գործունեությունը

«Կովկասի ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ «Կազմակերպություն») քաղաքացիների և իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է:

Կազմակերպությունը ստեղծվել է 2002թ. ապրիլի 2-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Կազմակերպության հիմնական նպատակներն են՝ Հարավային Կովկասում լրատվամիջոցների մասնագիտական զարգացմանն ու բազմազանության կայացմանն աջակցելը և կրթական ոլորտում բարեփոխումներ կատարելուն նպաստելը:

Կազմակերպության հիմնադիրներն են՝

- Լիբանանի քաղաքացի՝ պարոն Վիգեն Չեթերյան,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ պարոն Մարկ Գրիգորյան,
- Ռուսաստանի Դաշնության քաղաքացի՝ պարոն Ալեքսանդր Իսկանդարյան:

Կազմակերպության հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է չորս անդամից՝

- Խորհրդի նախագահ՝ պարոն Ալան Կասաև,
- Խորհրդի անդամ՝ պարոն Արտեմ Երկանյան,
- Խորհրդի անդամ՝ պարոն Գեորգի Գոկսաձե,
- Խորհրդի անդամ՝ պարոն Գեորգի Դերլուգյան:

Կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

Կազմակերպության իրավաբանական և գործունեության իրականացման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0025, Չարենցի 31 շինություն, 4 բնակելի տուն:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության աշխատողների քանակը կազմել է 21 աշխատող (2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 29 աշխատող):

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, նրա գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են բարեփոխվել և կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքները

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:
Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 17 – Պայմանական դեպքեր

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ֆինանսական եկամուտը ներառում է ներդրումների գծով տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվեգրվելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով տոկոսային ծախսերը և փոխարժեքային տարբերություններից առաջացած վնասը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ծախս:

(բ) Արտարժույթ

(i) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և

հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Վերափոխարկման արդյունքում առաջացող արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերափոխարկման արդյունքում առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված արտարժութային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրային դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումը տեղի է ունենում դրանց, առաջացման օրը: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում, երբ Կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրային դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող միավորի համար, գործիքի ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղկացուցիչ չպարունակող առևտրային դեբիտորական պարտքի սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

(ii) Դասակարգում և հետագա չափում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Կազմակերպությունը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը, վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման պահին Կազմակերպությունը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն

այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասպանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվներ - Բիզնես մոդելի գնահատում

Կազմակերպությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Գնահատման ժամանակ դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ֆինանսական ակտիվների նախորդ ժամանակաշրջանների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար և Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ակտիվները:

Ֆինանսական ակտիվներ - Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Կազմակերպությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Կազմակերպությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը կամ ժամկետները,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Կազմակերպության պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ (օրինակ՝ ոչ վերադարձնելի ֆինանսական ակտիվից):

Վաղաժամկետ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղաժամկետ մարման գումարը, ըստ էության, իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի

Ֆինանսական ակտիվներ - Հետագա չափում, շահույթ և վնաս

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը և արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ - Դասակարգում, հետագա չափում, շահույթ և վնաս

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած շահույթը կամ վնասը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Կազմակերպությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Կազմակերպությունը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն:

Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Կազմակերպությունը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Կազմակերպությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որի արդյունքում միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշը չի բավարարվում (օրինակ՝ փոխարկման պայմանի ավելացում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական անտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Կազմակերպությունը վերահաշվարկում

արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղչված, վերանայված կամ փոփոխված պայմանագրային դրամական միջոցների ներկա արժեք: Ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Կազմակերպությունը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Կազմակերպությունը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք, օրինակ՝ բանկերի կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխության դեպքում, եթե վարկային պայմանագրով բանկերն իրավունք ունեն կատարել նման փոփոխություն և Կազմակերպությունը հնարավորություն ունի կամ համաձայնվել փոփոխված տոկոսադրույքի հետ, կամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց տուգանքի: Կազմակերպությունը հաշվառում է տոկոսադրույքի փոփոխությունն ընթացիկ շուկայական տոկոսադրույքի՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Կազմակերպությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Կազմակերպությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի գեղչված ներկա արժեքը, ներառյալ՝ վճարված վճարները (առանց ստացված վճարների)՝ գեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության գծով մնացած դրամական միջոցների հոսքերի գեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը

ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

(iv) ***Ապաճանաչում***

Ֆինանսական ակտիվներ

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Կազմակերպությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Կազմակերպությունը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(v) ***Հաշվանցում***

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են զուտ գումարով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Կազմակերպությունն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Կազմակերպությունը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները տրված փոխառությունների և դեբիտորական պարտքերի դասին:

Կազմակերպությունը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններն այլ ֆինանսական պարտավորությունների դասին:

(դ) Արժեզրկում

(i) ***Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ***

Ֆինանսական գործիքներ

Կազմակերպությունը ճանաչում է սպասվող պարտքային վնասի գծով պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար:

Կազմակերպությունն առևտրային դեբիտորական պարտքերի վնասի գծով պահուստը չափում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով:

Երբ Կազմակերպությունը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո և երբ գնահատում է սպասվող պարտքային վնասը, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը

քանակական և թե՛ որակական տվյալները, ինչպես նաև Կազմակերպության նախկին փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը: Հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը չի ներառվում ֆինանսական ակտիվների կարճաժամկետ բնույթի պատճառով:

Կազմակերպությունը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Կազմակերպությունը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով պարտականությունները չեն կատարվել, եթե՝

- հավանական չէ, որ պարտապանը ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականություններն Կազմակերպության նկատմամբ, կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

Սպասվող պարտքային վնասի գնահատման ժամանակ դիտարկվող առավելագույն ժամկետն իրենից ներկայացնում է առավելագույն պայմանագրային ժամկետը, որի ընթացքում Կազմակերպությունը ենթարկվում է պարտքային ռիսկի:

Սպասվող պարտքային վնասի չափում

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է պարտքային վնասի հավանականությունից ելնելով կշռված պարտքային վնասի գնահատականը: Պարտքային վնասը չափվում է որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ որպես տարբերություն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Կազմակերպությունը պետք է ստանա պայմանագրի համաձայն, և որոնք ակնկալում է ստանալ):

Առևտրային դեբիտորական պարտքերի կարճ ժամկետի պատճառով ապասվող պարտքային վնասը չի զեղչվում:

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներն արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի գծով գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.

- հաճախորդի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, այդ թվում՝ պարտականությունների չկատարումը կամ վճարման ավելի քան 60 օր ուշացումը,
- Կազմակերպության կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որն Կազմակերպությունը այլ պայմաններում չէր դիտարկի,
- հաճախորդի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը:

Սպասվող պարտքային վնասի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով գտնվող ֆինանսական ակտիվների վնասի գծով սահուստը

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, եթե Կազմակերպությունը չունի ողջամիտ հիմքեր ակնկալելու ֆինանսական ակտիվի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը: Իր հաճախորդների համար Կազմակերպությունը կիրառում է համախառն հաշվեկշռային արժեքի դուրսգրման քաղաքականություն ֆինանսական ակտիվի ավելի քան երեք տարի ժամկետանց լինելու դեպքում՝ հիմք ընդունելով որ դա ողջամիտ ժամանակահատված է: Դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելիք գումարների փոխհատուցման հետ կապված Կազմակերպության ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

(ե) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, ինչպես նաև տեղանքի վերականգնման ծախսերը: Ձեռք բերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով "Այլ եկամուտ/ծախս" հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Կազմակերպություն կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց օգտագործման համար մատչելի դառնալու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է մաշվող գումարի գծով, որն ակտիվի ինքնարժեքն է կամ այլ փոխարինող գումար՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունն առանձին է հաշվարկվում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում,

քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Ստորև ներկայացված են օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար:

▪ Մեքենա-սարքավորումներ	5-10 տարի
▪ Արտադրատնտեսական գույք	5-10 տարի
▪ Գրքեր	3-5 տարի
▪ Այլ հիմնական միջոցներ	1-5 տարի

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճշտվում են ըստ անհրաժեշտության:

(զ) Ոչ նյութական ակտիվներ

(i) Ճանաչում և չափում

Կազմակերպության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ նրանք ավելացնում են ոչ նյութական ակտիվի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

(iii) Ամորտիզացիա

Ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ամորտիզացիայի հաշվարկը սկսվում է, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

▪ Համակարգչային ծրագրեր	10 տարի

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճշտվում ըստ անհրաժեշտության:

(է) Աշխատակիցների հատուցումներ

Կազմակերպությունը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները չափվում է չզեղչված հիմունքով և ծախսագրում է, երբ համապատասխան ծառայությունը ստացվում է:

Պարտավորություն է ճանաչվում աշխատակիցներին վճարման ենթակա այն գումարների մասով, որոնց համար աշխատակցի կողմից մատուցված ծառայության դիմաց Կազմակերպությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն, որը կարող է արժանահավատորեն գնահատվել:

(ը) Հասույթ

(i) Վաճառված ապրանքներ

Ապրանքների վաճառքից ստացված հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ առանց վերադարձումների, առևտրային զեղչերի և իջեցումների: Հասույթը ճանաչվում է համոզիչ վկայության առկայության դեպքում՝ սովորաբար վաճառքի իրագործված պայմանագրի տեսքով, համաձայն որի գնորդին են փոխանցվել ապրանքների սեփականության

հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված ծախսերն ու ապրանքների հնարավոր վերադարձը, չի դիտվում շարունակական մասնակցություն ապրանքների կառավարմանը և հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը: Եթե գոյություն ունի հավանականություն, որ կտրամադրվեն զեղչեր և գումարը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել, ապա զեղչը ճանաչվում է որպես հասույթի նվազեցում՝ վաճառքի ճանաչման պահին:

(ii) Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում փաստացի մատուցված ծառայությունները հաճախորդի կողմից ընդունման պահին կամ գործարքի ավարտվածության աստիճանի համամասնությամբ:

(թ) Շնորհներ

Շնորհները չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Կազմակերպությունը կատարելու է դրանց կից բոլոր պայմանները և որ շնորհները ստացվելու են:

(i) Ակտիվներին վերաբերող շնորհներ

Շնորհները, որոնց հիմնական պայմանն է, որ Կազմակերպությունը պետք է գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի ոչ ընթացիկ ակտիվներ, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ոչ դրամային ակտիվի ձևով ստացված շնորհները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են անվանական արժեքով և սիստեմատիկորեն փոխանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կամ այդ ակտիվի սպառումից առաջացող օգուտներին զուգընթաց:

(ii) Եկամուտներին վերաբերող շնորհներ

Շնորհները, որոնք փոխհատուցում են Կազմակերպության կատարած ծախսումների համար, ճանաչվում են շահույթում կամ վնասում, որպես այլ եկամուտ, սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Կազմակերպությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները:

(ժ) Շահութահարկի գծով ծախս

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որն ազդեցություն չունի ոչ հաշվապահական և ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկի գումարը չափվում է կիրառելով հարկի այն դրույքները, որոնք անկանխում է,

ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ընթացիկ և հետաձգված հարկի գումարը որոշելիս Կազմակերպությունը հաշվի է առնում անորոշ հարկային դիրքերի ազդեցությունը, ինչպես նաև լրացուցիչ հարկերի, տուգանքների, ուշացված վճարումների համար տոկոսների գանձման հնարավորությունը: Կազմակերպությունը գտնում է, որ հարկային պարտավորությունների գծով հաշվեգրումները բավարար են բոլոր բաց հարկային տարիների համար՝ հիմք ընդունելով բազմաթիվ գործոնների իր գնահատականը՝ այդ թվում հարկային օրենսդրության մեկնաբանությունները և նախկին տարիների փորձը: Այս գնահատականը հիմնված է գնահատումների և ենթադրությունների վրա և կարող է ներառել մի շարք դատողություններ ապագա իրադարձությունների վերաբերյալ: Կարող է ի հայտ գալ նոր տեղեկատվություն, որը կարող է ստիպել Կազմակերպությանը փոխել իր դիրքորոշումը գոյություն ունեցող հարկային պարտավորությունների բավարար լինելու մասին: Հարկային պարտավորությունների նման փոփոխություններն ազդեցություն կունենան հարկային ծախսերի վրա այն ժամանակաշրջանում, որում կատարվել է գնահատականը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Կազմակերպությունն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Կազմակերպությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

(h) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2019թ. դեկտեմբերի 31-ին և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Կազմակերպության ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վրա: Կազմակերպությունը մտադիր է կիրառել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ դրանք մտնեն ուժի մեջ:

- Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ 8-ում. Էականության սահմանում - 2018 թվականի հոկտեմբերին ՀՀՄՍ Խորհուրդը փոփոխություններ մտցրեց ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* և ՀՀՄՍ 8 *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»* ստանդարտներում «էականության» սահմանումը դրանցում համապատասխանեցնելու և սահմանման որոշ դրույթներ հստակեցնելու համար: Նոր սահմանման մեջ ասվում է, որ. «Տեղեկատվությունը էական է, եթե դրա բաց թողնելը, սխալ ներկայացնելը կամ թաքցնելը, ողջամտորեն ակնկալվում է, որ կարող է ազդել որոշումների վրա, որոնք ընդհանուր օգտագործման ֆինանսական հաշվետվությունների հիմնական օգտագործողները կայացնում են այն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա, որոնք ֆինանսական տեղեկատվություն են տրամադրում կոնկրետ հաշվետու կազմակերպության մասին»:

  Կազմակերպության գնահատմամբ չի ակնկալվում, որ էականության սահմանման փոփոխությունները էական ազդեցություն կունենա Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

4 Իրական արժեքի որոշում

Կազմակերպության հաշվապահական հաշվառման որոշակի դրույթների և բացահայտումների համար պահանջվում է իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Կազմակերպությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև՝

- *1-ին մակարդակ.* Նույն ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված),
- *2-րդ մակարդակ.* 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների վրա հիման վրա ստացվող),
- *3-րդ մակարդակ.* Ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք էական են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումներն Կազմակերպությունը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի են ունեցել փոփոխությունները:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 16-ում՝ "Իրական արժեք և ռիսկերի կառավարում":

5 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն

ՖՀՄՍ 16

Կազմակերպությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16 *«Վարձակալություններ»* ստանդարտը 2019թ. հունվարի 1-ից:

Կազմակերպությունը կիրառել է ՖՀՄՍ 16-ն օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը, համաձայն որի ստանդարտը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում 2019թ. հունվարի 1-ի դրությամբ: Համապատասխանաբար, 2018թ. համար ներկայացված համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում, այսինքն, այն ներկայացվում է ինչպես նախկինում՝ ՀՀՄՍ 17-ի և համապատասխան մեկնաբանությունների համաձայն: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների մանրամասները ներկայացված են ստորև: Բացի այդ, ՖՀՄՍ 16-ի բացահայտման պահանջներն ընդհանուր առմամբ չեն կիրառվել համադրելի տեղեկատվության նկատմամբ:

(ա) Վարձակալության սահմանումը

Նախկինում Կազմակերպությունը պայմանագրի սկզբում որոշում էր, թե արդյոք համաձայնությունը հանդիսանում էր վարձակալության պայմանագիր կամ պարունակում էր վարձակալություն՝ ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 4 *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»* համաձայն: Այժմ Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք

պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն Ծանոթագրություն 18-ում ներկայացված մոտեցմամբ:

Պայմանագրի սկզբում Կազմակերպությունը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը: Գնահատելու համար, արդյոք պայմանագրով փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը, Կազմակերպությունն օգտագործում է ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը:

ՖՀՄՍ 16-ին անցնելիս Կազմակերպությունը որոշել է օգտվել գործնական բնույթի պարզեցումից, որը թույլ է տալիս չվերանայել վարձակալության գործարքների բացահայտման համար նախկինում իրականացված գնահատման արդյունքները: Կազմակերպությունը ՖՀՄՍ 16-ը կիրառել է միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք նախկինում որոշակիացվել էին որպես վարձակալության պայմանագրեր: Պայմանագրերը, որոնք չէին որոշակիացվել որպես վարձակալության պայմանագրեր ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն, չեն վերագնահատվել ՖՀՄՍ 16-ի պահանջներին համապատասխանող վարձակալություն բացահայտելու համար: Այդ իսկ պատճառով, ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը կիրառվել է միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կնքվել կամ փոփոխվել են 2019թ. հունվարի 1-ին կամ հետո:

(բ) Կազմակերպությունը որպես վարձակալ

Կազմակերպությունը վարձակալում է գույք վարչական և ծրագրերի իրականացման նպատակներով: Նախկինում Կազմակերպությունը վարձակալության պայմանագրերը դասակարգում էր որպես գործառնական վարձակալություն ելնելով իր գնահատումից, թե արդյոք վարձակալության դեպքում Կազմակերպությանը փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: ՖՀՄՍ 16-ի համաձայն՝ Կազմակերպությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ վարձակալության այս պայմանագրերի մի մասի համար, այսինքն՝ վարձակալությունն արտացոլվում է հաշվապահական հաշվեկշռում:

(i) ՀՀՄՍ 17-ի համաձայն որպես գործառնական վարձակալություն դասակարգված վարձակալություն

Նախկինում շենքի, գույքի և տրանսպորտային միջոցների վարձակալությունը Կազմակերպությունը դասակարգում էր որպես գործառնական վարձակալություն՝ ՀՀՄՍ 17-ի համաձայն: ՖՀՄՍ 16-ին անցման ժամանակ վարձակալության այս պայմանագրերը չափվել են մնացած վարձավճարների ներկա արժեքով՝ զեղչված Կազմակերպության լրացուցիչ փոխառության դրույքով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ (տես Ծանոթագրություն 5(դ)): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է այն գումարով, որը հավասար է վարձակալության գծով պարտավորությանը՝ ճշգրտված վարձակալության գծով կատարած կանխավճարներով կամ հաշվեգրված վարձավճարներով: Կազմակերպությունը կիրառել է այս մոտեցումը իր բոլոր վարձակալության պայմանագրերի նկատմամբ:

Նախկինում ՀՀՄՍ 17-ի համաձայն որպես գործառնական վարձակալություն դասակարգված վարձակալության պայմանագրերի նկատմամբ Կազմակերպությունը կիրառել է որոշ գործնական բնույթի պարզեցումներ: Մասնավորապես, Կազմակերպությունը՝

- բացառել է սկզբնական ուղղակի ծախսումներն օգտագործման իրավունքի ձևով ակտիվների չափումից սկզբնական կիրառման ամսաթվին:

(գ) Կազմակերպությունը որպես վարձատու

Կազմակերպությունը տալիս ենթավարձակալության պայմանագրեր:

(դ) Ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա

*(i) Ազդեցությունը ստանդարտին անցնելիս **

ՖՀՄՍ 16-ին անցնելիս Կազմակերպությունը ճանաչել է ստորև ներկայացված իրավունքի ձևով ակտիվները և վարձակալության գծով պարտավորությունները:

հազ. դրամ	1 հունվարի 2019թ.
Իրավունքի ձևով ակտիվներ – հիմնական միջոցներ	4,023
Չբաշխված շահույթ - ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային ազդեցություն	(346)
Վարձակալության գծով պարտավորություններ	4,369

* ՖՀՄՍ 16-ի կիրառման ազդեցությունը ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի վրա ներկայացված է Ծանոթագրություն 18-ում: ՖՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 17-ի համաձայն հաշվապահական հաշվառման քաղաքականության մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 18-ում:

Որպես գործառնական վարձակալություն դասակարգված վարձակալությունների գծով պարտավորությունները չափելիս Կազմակերպությունը վարձավճարները զեղչել է լրացուցիչ փոխառության դրույքով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ: Կիրառված միջին կշռված դրույքը կազմում է 12%:

2019թ. հունվարի 1-ից գործում են մի շարք այլ նոր ստանդարտներ և գործող ստանդարտների փոփոխություններ, որոնք սակայն էական ազդեցություն չունեն Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա, բացառությամբ վերը ներկայացված ստանդարտի:

6 Գործառնական այլ եկամուտներ

հազ. դրամ	2019թ.	2018թ.
Ակտիվներին վերաբերող շնորհներից	195	752
Եկամուտներին վերաբերող շնորհներից	160,353	103,514
Այլ եկամուտներ	1,400	-
	161,948	**104,266**

Կազմակերպությունը 2019 թվականի ընթացքում ընդամենը 162,515 հազար դրամ գումարով դրամական տեսքով շնորհներ է ստացել 4 շնորհատուներից (2018թ.՝ 109,753 հազար դրամ՝ 7 շնորհատուներից) (տե՛ս ծանոթագրություններ 13, 14):

7 Աշխատակազմի գծով ծախսեր

Տարվա ընթացքում Կազմակերպության աշխատակիցների միջին թիվը կազմում էր 21 աշխատող (2018թ.՝ 29 աշխատող):

8 Գործառնական այլ ծախսեր

հազ. դրամ	2019թ.	2018թ.
Դրամաշնորհային ծրագրերի և այլ ծախսեր՝		
Լեռնային Ղարաբաղում հասարակական ներգրավվածության կարողությունների բարձրացում	42,063	-
Սևծովյան վստահություն ծրագիր	13,667	-
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	11,650	18,407
Փոստի, կապի և տրանսպորտային ծախսեր	3,071	2,908
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	1,854	2,967
Կրթաթոշակ	2,274	3,689
Ծրագրային այլ ծախսեր	3,656	2,705
Վարչական այլ ծախսեր	1,254	1,147
	79,490	**31,823**

9 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

հազ. Դրամ	2019թ.	2018թ.
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Տոկոսային եկամուտ	1,631	227
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	-	852
Ֆինանսական եկամուտ	**1,631**	**1,079**
Վարձակալության գծով պարտավորությունների տոկոսային ծախսեր	(759)	-
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(107)	-
Ֆինանսական ծախսեր	**(866)**	-
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական եկամուտ	**765**	**1,079**

10 Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Մեքենա-սարքավորումներ	Արտադրական, տնտեսական գույք	Գրքեր	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Առ 1 հունվարի 2018թ.	5,146	1,257	2,551	1,453	10,407
Ավելացումներ	-	-	5	-	5
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	5,146	1,257	2,551	1,453	10,407
Ավելացումներ	-	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	5,146	1,257	2,551	1,453	10,407
Կուտակված մաշվածություն					
Առ 1 հունվարի 2018թ.	4,498	1,233	2,291	1,421	9,443
Տարվա մաշվածության	493	23	215	1	732
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	4,498	1,233	2,291	1,421	9,443
Տարվա մաշվածության	128	1	40	6	175
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	5,119	1,256	2,546	1,428	10,349
Հաշվեկշռային արժեք					
Առ 1 հունվարի 2018թ.	648	24	260	32	964
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	155	1	50	31	237
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	27	0	9	25	62

(ա) Հիմնական միջոցների ձեռքբերումներ

2019թ. և 2018թ. ընթացքում հիմնական միջոցների ձեռքբերումները կատարվել են միայն շնորհների հաշվին:

(բ) Գրքերի գույքագրում և ճանաչում

Կազմակերպությունը տարիների ընթացքում տպագրել է, ձեռք է բերել, անհատույց ստացել է գրքեր և մասնագիտական գրականություն (այսուհետ՝ գրքեր) և ունի ձևավորված գրադարան: Ըստ հաշվապահական գրանցումների 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրքեր դասում ներառված են 9 հազար դրամ (2018թ.՝ 50 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով գրքեր, իսկ արտահաշվեկշռում՝ 5,118 հազար դրամ գումարով (2018թ.՝ 5,118 հազար դրամ) տարիների ընթացքում անհատույց ստացված գրքեր: Կազմակերպության հաշվապահական գրանցումներում գրքերի վերաբերյալ քանակագումարային վերլուծական տվյալների չպահպանվելու պատճառով Կազմակերպությունը գրքերի գույքագրում և հաշվապահական գրանցումների հետ համադրություն չի կարողանում իրականացնել:

Ի լրումն, տարիների ընթացքում անհատույց ստացված գրքերը չեն ճանաչվել որպես հիմնական միջոց և չեն չափվել իրական արժեքով՝ համաձայն ՀՀՄՍ 16 *«Հիմնական միջոցներ»* և ՖՀՄՍ 15 *«Հատույթ գնորդների հետ պայմանագրերից»* ստանդարտների և դրանց սկզբնական փաստաթղթերի վերաբերյալ հաշվապահական գրանցումներ չեն պահպանվել:

(գ) Օգտակար ծառայության ժամկետների վերանայում

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում Կազմակերպությունը չի իրականացրել գործառնական արդյունավետության վերանայում և անփոփոխ է թողել հիմնական միջոցների բոլոր տեսակների օգտակար ծառայության ժամկետները:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 10,492 հազար դրամ սկզբնական արժեքով (2018թ.՝ 8,547 հազար դրամ) հիմնական միջոցներ Կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

11 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	2019թ.	2018թ.
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	-	964
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստ	-	-
	-	964

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի հետ կապված Կազմակերպության ենթարկվածությունը վարկային ու արտարժույթի ռիսկերին ներկայացված է ծանոթագրություն 16-ում:

12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2019թ.	2018թ.
Դրամարկղ	138	477
Բանկային հաշիվներ	34,882	43,251
	35,020	43,728

Կազմակերպության ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին և ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են ծանոթագրություն 16-ում:

13 Ակտիվներին վերաբերող շնորհներ

հազ. դրամ	2019թ.	2018թ.
Տարեսկզբի դրությամբ	280	1,027
Վերադասակարգում եկամուտներին վերաբերող շնորհներից	-	5
	280	1,032
Շնորհներից եկամտի ճանաչում	(195)	(752)
Տարեվերջի դրությամբ	85	280

14 Եկամուտներին վերաբերող շնորհներ

հազ. դրամ	2019թ.	2018թ.
Տարեսկզբի դրությամբ	39,098	32,864
Չբաշխված շահույթի վերագրում շնորհներին	4,185	-
Շնորհների ստացում	162,515	109,753
	205,798	142,617
Վերադասակարգում եկամուտներին վերաբերող շնորհներից	-	(5)
Շնորհներից եկամտի ճանաչում	(160,353)	(103,514)
Տարեվերջի դրությամբ	45,445	39,098

2019թ. ընթացքում Կազմակերպությունը ընդամենը 162,515 հազար դրամ գումարով դրամական տեսքով շնորհներ է ստացել 4 շնորհատուներից (2018թ.՝ 109,753 հազար դրամ՝ 7 շնորհատուներից): Նրանցից մեկը՝ Երևանում Բրիտանական Դեսպանատունը, տրամադրել է

15 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2019թ.	2018թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	10,085	239
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	313	27
	10,398	**266**

Կազմակերպության ենթարկվածությունը արտարժույթի և իրացվելիության ռիսկերին առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված ներկայացված է ծանոթագրություն 16-ում:

16 Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Իրական արժեք

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները էականորեն չեն տարբերվում վերջիններիս հաշվեկշռային արժեքներից:

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Կազմակերպությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Կազմակերպության ենթարկվածության մասին, ինչպես նաև ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Կազմակերպության նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումներ:

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Կազմակերպության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Կազմակերպության նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում բանկային ավանդների, բանկերից ստացման ենթակա տոկոսի, բանկային հաշիվների մնացորդների, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով:

(i) Ենթարկվածությունը պարտքային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը:

	Հաշվեկշռային արժեք	
հազ. դրամ	2019թ.	2018թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	964
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	34,882	43,251
Կարճաժամկետ բանկային ավանդներ	21,194	-
	56,076	**44,215**

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական

ավանդների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ աշխարհագրական տարածաշրջանների:

	Հաշվեկշռային արժեք	
հազ. դրամ	**2019թ.**	**2018թ.**
Տեղական	56,076	44,215
	56,076	**44,215**

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի և բանկային ավանդի հաշվեգրված տոկոսի գծով դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ հաճախորդների տեսակների:

	Հաշվեկշռային արժեք	
հազ. դրամ	**2019թ.**	**2018թ.**
Իրավաբանական անձինք և կազմակերպություններ	56,076	44,215
	56,076	**44,215**

Արժեզրկումից կորուստներ

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի ժամկետայնությունը:

հազ. դրամ	**Համախառն**	**Արժեզրկված**	**Համախառն**	**Արժեզրկված**
	2019թ.	**2019թ.**	**2018թ.**	**2018թ.**
Ոչ ժամկետանց	56,076	-	44,215	-
	56,076	**-**	**44,215**	**-**

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Կազմակերպությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Կազմակերպության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Կազմակերպության համբավը վտանգելու:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության: Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

2019թ.	**Հաշվեկշռային գումար**	**Պայմանագր. դրամական միջոցների հոսքեր**	**0-6 ամիս**	**6-12 ամիս**	**ավելի քան 12 ամիս**
հազ. դրամ					
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10,398	10,398	10,398	-	-
Վարձակալության գծով պարտավորություններ	19,055	22,500	3,000	3,000	16,500
	29,453	**32,898**	**13,398**	**3,000**	**16,500**

2018թ. հազ. դրամ	Հաշվեկշռային գումար	Պայմանագր. դրամական միջոցների հոսքեր	0-6 ամիս	6-12 ամիս
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	266	266	266	-
	266	**266**	**266**	**-**

(ե) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Կազմակերպության եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանը ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(i) Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկին Կազմակերպության ենթարկվածությունը կապված է դրամից տարբեր արժույթներով՝ Եվրոյով և Շվեյցարական ֆրանկով արտահայտված արտարժութային բանկային հաշվի հետ:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ուներ արտարժույթով արտահայտված հետևյալ ֆինանսական ակտիվները.

հազ. դրամ	Եվրոյով 2019թ.	Շվեյցարական ֆրանկով 2019թ.	Եվրոյով 2018թ.	Շվեյցարական ֆրանկով 2018թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,880	3,495	3,442	111
Զուտ ենթարկվածություն	**1,880**	**3,495**	**3,442**	**111**

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները՝

ՀՀ դրամով	Միջին դրույք		Սփոթ դրույքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2019թ.	2018թ.	2019թ.	2018թ.
1 Եվրո	570.56	570.56	553.65	553.65
1 Շվեյցարական ֆրանկ	494.10	494.10	491.12	491.12

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Կազմակերպությունը դիտարկում է որպես խելամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ: Վերլուծությունն իրականացվել է նույն հիմունքով 2018թ. համար, ինչպես ներկայացված է ստորև:

հազ. դրամ	Սեփական կապիտալ	Շահույթ կամ վնաս
2019թ.		
ՀՀ դրամի 10% արժեզրկում Եվրոյի նկատմամբ	188	188
ՀՀ դրամի 10% արժեզրկում Շվեյցարական ֆրանկի նկատմամբ	349	349
2018թ.		
ՀՀ դրամի 10% արժեզրկում Եվրոյի նկատմամբ	344	344

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(ii) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում բանկային ավանդների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Կազմակերպության ենթարկվածության չափը որոշող ճկուն քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր ֆինանսական գործիքների առումով ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

Կառուցվածքը

Հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպության տոկոսակիր ֆինանսական գործիքների կառուցվածքը հետևյալն էր.

	Հաշվեկշռային արժեք	
	2019թ.	2018թ.
հազ. դրամ		
Ֆիքսված դրույքով գործիքներ		
Ֆինանսական ակտիվներ	21,194	-
	21,194	-

Ֆիքսված դրույքով գործիքների իրական արժեքի զգայունության վերլուծություն

Կազմակերպությունը չի հաշվառում ֆիքսված դրույքով ֆինանսական ակտիվները և պարտավորությունները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես նաև չի նախատեսում ածանցյալ գործիքները (տոկոսադրույքի սվոպերը) որպես հեջավորման գործիքներ՝ իրական արժեքի հեջի հաշվառման մոդելի շրջանակներում: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն չեն ունենա շահույթի կամ վնասի վրա:

17 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Կազմակերպությունը չունի ամբողջական ապահովագրություն իր բոլոր շենքերի և սարքավորումների համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Կազմակերպության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Կազմակերպությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Կազմակերպությունը ներգրավված չէ դատական վարույթներում և այս առումով որևէ էական ազդեցություն չի ակնկալում իր ֆինանսական վիճակի վրա:

(գ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերն ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

(դ) Շրջակա միջավայրի պաշտպանություն

Կազմակերպության ղեկավարության կարծիքով Կազմակերպությունը համապատասխանում է շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջներին և վստահ է, որ Կազմակերպությունը չունի շրջակա միջավայրի պահպանության հետ կապված պարտավորությունների ծագման էական ռիսկեր:

Այնուամենայնիվ, շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը համեմատաբար նոր է և օրենսդրության մեկնաբանությունների հնարավոր փոփոխությունները կարող են հիմք հանդիսանալ հետագա պարտավորությունների ծագման համար:

18 Վարձակալություն

(ա) Վարձակալության պայմանագրեր, որտեղ Կազմակերպությունը հանդես է գալիս որպես վարձակալ

Կազմակերպությունը կիրառել է ՖՀՄՍ 16-ն օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը և, այդ իսկ պատճառով, համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել և շարունակվում է ներկայացվել ՀՀՄՍ 17 և ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 4 պահանջների համաձայն: ՀՀՄՍ 17 և ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 4 պահանջների համաձայն հաշվապահական հաշվառման քաղաքականությունն առավել մանրամասն բացահայտվում է առանձին:

2019թ. հունվարի 1-ից կիրառվող քաղաքականություն

Պայմանագրի սկզբում Կազմակերպությունը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը: Գնահատելու համար, թե արդյոք պայմանագրով փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը, Կազմակերպությունն օգտագործում է ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը: Այս քաղաքականությունը կիրառելի է 2019թ. հունվարի 1-ին կամ հետո կնքված պայմանագրերի համար:

(i) Կազմակերպությունը որպես վարձակալ

Կազմակերպությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման

վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Կազմակերպությանը չի փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Կազմակերպությունը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում հիմնական միջոցների համար:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Կազմակերպության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Կազմակերպությունը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Կազմակերպությունը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո, և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Կազմակերպությունը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Կազմակերպությունը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Կազմակերպությունը խելամտորեն համոզված չէ, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Կազմակերպության գնահատականի փոփոխություն, եթե Կազմակերպությունը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները և վարձակալության գծով պարտավորությունները Կազմակերպությունը ներկայացնում է առանձին՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Կազմակերպությունը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարները Կազմակերպությունը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

ՖՀՄՍ 16-ի համաձայն՝ փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, օրինակ՝ չեն արտացոլում շուկայական դրույքների փոփոխությունները, չպետք է ներառվեն վարձակալության գծով պարտավորության չափման մեջ:

(ii) Կազմակերպությունը որպես վարձատու

Կազմակերպությունը չունի վարձակալության եւ ենթավարձակալության պայմանագրեր:

(iii) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

հազ. դրամ	**Հիմնական միջոցներ**
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	4,023
Ավելացումներ օգտագործման իրավունքի ձևով ակտիվներին	19,796
Տարվա մաշվածության ծախս	(5,260)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**18,559**

Կազմակերպությունը վարձակալում է իր գրասենյակի շենքը: 2019թ. սեպտեմբերի 26-ին կնքված համաձայնագրով գրասենյակի շենքի վարձակալության ժամկետը երկարացվել է մինչև 2023թ. հոկտեմբերի 1-ը: Այս պայմանագրի գծով Կազմակերպությունը վարձավճարները զեղչել է լրացուցիչ փոխառության դրույքով 2019թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ: Կիրառված միջին կշռված դրույքը կազմում է 12%:

(iv) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

հազ. դրամ	**Հիմնական միջոցներ**
2019թ. – Վարձակալություն՝ ՖՀՄՍ 16-ի համաձայն	
Վարձակալության գծով պարտավորությունների տոկոսներ	759
Տարվա մաշվածության ծախս	5,260
Գործառնական այլ ծախսեր - Կարճաժամկետ վարձակալության գծով ծախսեր	834
2018թ. – Գործառնական վարձակալություն՝ ՀՀՄՍ 17-ի համաձայն	
Վարձակալության գծով ծախս	9,833

(v) Վարձակալության գծով պարտավորություններ

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2019թ.**
Ոչ ընթացիկ	15,003
Ընթացիկ	4,052
Ընդամենը	**19,055**

Վարձակալության գծով պարտավորությունները կատարելիս Կազմակերպությունը իրացվելիության էական ռիսկեր չի կրում:

Վարձակալության գծով բոլոր պարտավորությունները ՀՀ դրամով են:

Կազմակերպության ենթարկվածությունը իրացվելիության ռիսկին վարձակալության գծով պարտավորությունների հետ կապված ներկայացված է ծանոթագրություն 16-ում:

19 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Կազմակերպությունը վերահսկվում է իր հիմնադիրների՝ Լիբանանի քաղաքացի՝ պարոն Վիգեն Չեթերյանի, Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ պարոն Մարկ Գրիգորյանի և Ռուսաստանի Դաշնության քաղաքացի՝ պարոն Ալեքսանդր Իսկանդարյանի կողմից: Վերջինս հանդիսանում է նաև Կազմակերպության տնօրենը:

(բ) Գործարքներ ղեկավար անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների հետ

(i) Ղեկավարության վարձատրությունը

Տարվա ընթացքում հիմնական ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է "Աշխատակազմի գծով ծախսեր" հոդվածում:

հազ. դրամ	2019թ.	2018թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	24,937	24,821
	24,937	**24,821**

20 Հետագա դեպքեր

2020թ. հունվարի 30-ից COVID-19 կորոնավիրուսի բռնկման հետևանքների ազդեցությունը Հայաստանում վերահսկելու և մեղմելու նպատակով ՀՀ կառավարությունը ձեռնարկեց տարբեր միջոցառումներ: 2020թ. մարտի 16-ին ՀՀ կառավարության 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարվեց և սահմանափակումներ մտցվեցին գործունեության որոշ տեսակների իրականացման և մարդկանց տեղաշարժման վերաբերյալ:

Կորոնավիրուսի բռնկման պատճառով ամբողջ աշխարհում, այդ թվում նաև Հայաստանում, բացասական ազդեցության ենթարկվեցին տարբեր ոլորտներում գործող կազմակերպություններ: Նրանց համար տնտեսական պայմանների զգալի վատթարացում տեղի ունեցավ:

Կազմակերպության ղեկավարությունը վերոնշյալը հաշվի առնելով գնահատել և գտնում է, որ սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը տեղին է:

Կազմակերպությունը ունի գործող և ակնկալվող դրամաշնորհային պայմանագրեր, ինչպես նաև բանկային ավանդ և դրամական միջոցներ, որոնց հաշվին ֆինանսավորում է իր ընթացիկ գործունեությունը և իրականացնում է կանոնադրական նպատակները:

Ի լրումն, Կազմակերպությունը չունի և չի ունեցել վարկեր ու փոխառություններ կամ այլ էական պարտավորություններ և տնօրինում է բավականաչափ դրամական միջոցներ տեսանելի ապագայում իր բնականոն գործունեությունը ապահովելու համար:

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հայաստանում հայտարարված արտակարգ դրությունը երկարաձգվել էր մինչև 2020թ. հունիսի 13-ը ներառյալ և մեղմացվել էին մի շարք սահմանափակումներ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 08.07.2020 15:17